ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

6

Ապրիլ, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Բ Ո Ւ Մ
Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С
Аналитический бюллетень

№ 6 (14)
Ապրիլ, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի արտաքին քաղաքականության
հայեցակարգի վերաբերյալ 3

Հանդիպում ՀՀ-ում Իրանի փոխդեսպանի հետ 6

Азербайджан готовится к войне нового типа 7

Ադրբեջանական լոբբինգի կայացման
գործընթացը. ընդհանուր տվյալներ 10

Մերձավորարևելյան զարգացումներ.
Վաշինգտոնի քաղաքական որոշումը 13

Реконфигурация военного присутствия США за рубежом 17

Արաբական պետությունների լիգայի Ռիադի
գագաթաժողովը և Հայաստանի շահերը 24

Ինտերնետային ֆորումները՝ որպես մեթոդ և աղբյուր 29

Հայ-թուրքական առևտրաշրջանառությունը 32

Թուրքական քարոզչություն՝ փոխհատուցման դիմաց 35

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսաստանը վերականգնում է ռազմաքաղաքական և տնտեսական դիրքերը գլոբալ հարթությունում, և պետք է ընդունել, որ այդ տերության ռազմավարությունը ներկայումս հայեցակարգային բնույթ է կրում: Նման իրողությունը պայմանավորված է ոչ միայն տնտեսական վերելքով և պետության կայացումով: Այդ գործընթացներին զուգահեռ համակարգվում է ռուսական քաղաքական միտքը, հստակեցվում են գաղափարախոսական դրույթները («ինքնիշխան ժողովրդավարություն», «պահպանողականություն»), մշակվում է ավելի արդիական ռազմական դոկտրին, վերանայվում է ազգամիջյան հարաբերությունների հայեցակարգը և այլն: Պետք է, թերևս, համաձայնել փորձագիտական այն գնահատականների հետ, համաձայն որոնց՝ այսօր տեղի է ունենում ռուս ազգի ձևավորման (կամ վերաձևավորման) մի գործընթաց, երբ նա փորձում է իմաստավորել/վերիմաստավորել իր տեղը և առաքելությունն աշխարհում:

Վերոնշյալ իրողությունների վկայությունն է ՌԴ ԱԳՆ-ի կողմից վերջերս կազմված և հրապարակված *«Обзор внешней политики Российской Федерации»* փաստաթուղթը *(տե՛ս «ԳԼՈԲՈՒՍ»-ին կցված հատուկ հավելվածը)*, որը փաստորեն հանդիսանում է այդ տերության *արտաքին քաղաքականության հայեցակարգը:* Հատկանշական է, որ ՌԴ արտաքին քաղաքականության ռազմավարության մշակման գործընթացին մասնակցել են տասնյակից ավելի հետազոտական հաստատություններ և կենտրոններ *(տե՛ս փաստաթղթի վերջում ներկայացված հավելվածը):* Համաձայն փաստաթղթի հեղինակների՝ այսօր ՌԴ-ն ներգրավվում է միջազգային կյանքի բոլոր ոլորտներում, և հայեցակարգի ստեղծման գերխնդիրն է այդ նոր պայմաններին «ինտելեկտուալ և հոգեբանորեն պատրաստվելը»:

Ակնհայտ է, որ հանրային բնույթի նման փաստաթղթերը չեն արտացոլում այս կամ այն երկրի ռազմավարության բոլոր նրբությունները: Սակայն հաշվի առնելով ՀՀ-ՌԴ հարաբերությունների առանձնահատուկ նշանակությունը՝ կարևոր է ամրագրել հայեցակարգի ընդհանուր տրամաբանությունը և կիրառված տերմինաբանությունը, ինչպես նաև համառոտ անդրադառնալ ՀՀ-ի հետ այս կամ այն չափով առնչվող որոշ խնդիրների: Այս համատեքստում արձանագրենք, որ համաձայն դիտարկվող փաստաթղթի՝ ՌԴ արտաքին քաղաքականությունում ելակետային են համարվում հետևյալ հիմնադրույթները.

- *ՌԴ-ն վերականգնել է ինքնուրույնությունն արտաքին քաղաքականության ոլորտում* (այսպիսով փաստվում է, որ հետսառըպատերազմյան՝ ելցինյան դարաշրջանում Ռուսաստանը փաստորեն կորցրել էր ինքնիշխանությունը):
- Ներկայիս *աշխարհաքաղաքական մրցակցությունն ընթանում է քաղաքակրթական հարթությունում* (այս դրույթը, համահունչ լինելով ամերիկյան քաղաքակրթական բախումների վերաբերյալ Հանթինգտոնի դոկտրինին, ընդգծում է ազգային/քաղաքակրթական արժեքային համակարգերի և զարգացման ուղիների կարևորությունը)[1]:
- Գլոբալացումը հանգեցնում է համաշխարհային ռեսուրսների ավելի հավասարաչափ բաշխման, ինչն իր հերթին «օբյեկտիվ հիմք է ստեղծում բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման համար»[2]*:* (Համաձայն ամերիկյան ներկա վարչակազմի պատկերացումների և մասնավորապես Քոնդոլիզա Ռայսի հայտարարությունների՝ գլոբալացումը պետք է հանգեցնի ազգային պետությունների վերացմանը և ուժի մի կենտրոնից ղեկավարվող համակարգի հաստատմանը):

[1] Փաստաթղթում քաղաքակրթական գործոնը բազմիցս շեշտվում և ավելի քան կարևորվում է, սակայն, միևնույն ժամանակ, ներկայացվում են այդ գործոնի քաղաքական դրսևորման ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքները:

[2] Հայեցակարգում նշվում է, «որ միաբևեռության առասպելը վերջնականորեն փլուզվեց Իրաքում»:

Վերջին կետի առիթով նկատենք, որ ընդհանուր առմամբ հայեցակարգի տրամաբանությունն ուղղված է ԱՄՆ գերակայության դեմ[1]: Սակայն ՌԴ ԱԳՆ-ն կարևորում է մեծ տերությունների պատասխանատվությունը գլոբալ գործընթացներում: Համաձայն ռուսաստանյան տեսակետի՝ պետք է ձևավորվի առաջատար տերությունների մի խումբ, որը և պետք է կարգավորի միջազգային հարաբերությունների համալիրը: Նշենք, որ այդ տեսակետը համընկնում է ամերիկյան քաղաքական ընտրանու մի մասի այն մոտեցմանը, համաձայն որի՝ ամերիկյան բացարձակ գերակայությունը ժամանակավոր երևույթ է, և դրան հետևելու է ԱՄՆ «նահանջը»: Սակայն, ըստ ամերիկյան պատկերացումների, դա չի նշանակում ԱՄՆ-ի՝ «մեծ քաղաքականությունից» հեռանալ, այլ ենթադրում է ընդամենը ռազմավարության որոշակի «օպտիմիզացիա» և «հարմարում» ստեղծված նոր պայմաններին: Մասնավորապես, ենթադրվում է առաջատար տերությունների մի խմբի ձևավորում (դրա նախադեպը ներկայիս «ութնյակն» է, որին մոտ ապագայում ամենայն հավանականությամբ կմիանան Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան): Այդ խումբն է, որ պետք է «կառավարի աշխարհը», և այդ «ընտրյալ հանրությունում» ԱՄՆ-ը պետք է պահպանի առաջատարությունը, բայց ոչ բացարձակ գերակայությունը, այսինքն՝ լինի «առաջինը հավասարների մեջ»: Ըստ ամենայնի ռուսաստանյան փորձագետները համամիտ են նման մոտեցմանը *(տե՛ս փաստաթղթի* «Участие России в группе «восьми» *ենթաբաժինը),* համաձայն որի՝ ներկա միջազգային հարաբերությունների՝ միաբևեռից բազմաբևեռ համակարգի անցումային փուլի «սառըպատերազմյան» տրամաբանությունը կարող է մեղմվել և վերափոխվել «համաշխարհային կոլեկտիվ կառավարման և պատասխանատվության» համակարգի:

Հայեցակարգում, միջազգային անվտանգության համատեքստում, հատուկ տեղ է հատկացվում սպառազինությունների հետ կապված հետևյալ հիմնախնդիրներին.

- ԱՄՆ-ի՝ Հակահրթիռային պաշտպանության պայմանագրից դուրս գալուն և տիեզերքում սպառազինության տեղակայմանը (վերջին հանգամանքը կարող է որակապես փոխել ԱՄՆ-ՌԴ ստրատեգիական-միջուկային հավասարությունը, և դրան առանձնահատուկ ուշադրություն է դարձվում),
- Միջին և փոքր հեռահարության հրթիռների վերաբերյալ պայմանագրին[2],
- Միջուկային զենքի չտարածման պայմանագրի խախտումներին,
- Քիմիական և կենսաբանական զենքերի արգելման կոնվենցիաներին (որոնք հրաժարվում է ստորագրել ԱՄՆ-ը):

Որպես նորույթ կարելի է արձանագրել փաստաթղթում միջազգային տեղեկատվական անվտանգության խնդրին գլոբալ նշանակության «մարտահրավերի» կարգավիճակ տալը. դա վկայում է, որ այսօր ՌԴ իշխանությունները սկսել են կարևորել տեղեկատվական ոլորտը:

Հակամարտությունների կարգավորման խնդիրներում (որոնցից առաջնահերթությունը տրվում է Մերձավոր Արևելքում ընթացող արաբա-իսրայելական հակամարտությանը և ԱՄՆ-Իրան չկարգավորված հարաբերություններին) ՌԴ ԱԳՆ հիմնական թեզերն են.

- «Վերջնագրերի» և «ուժի կիրառման» քաղաքականության անընդունելիությունը, որը բոլոր կողմերին «տանում է փակուղի»:

---

[1] ԱՄՆ-ին վերաբերող ենթաբաժնում նշվում է, որ ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների հիմնական բարդությունն այն է, որ ամերիկյան կողմը փորձում է ընդունել «առաջնորդողի» կամ «գործերը վարողի» կեցվածք: Կարելի է կարծել, թե այդ հանգամանքը, իրոք, առանցքային նշանակություն ունի ՌԴ-ի համար և, ինչպես որ դա տեղի էր ունենում խորհրդային տարիներին, ԱՄՆ-ի կողմից որոշակի զիջումները կարող են հանգեցնել մարտավարական հարթությունում այդ տերությունների հարաբերությունների կարգավորման:

[2] Արևելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղակայման առիթով ռուսաստանյան փորձագետները հաճախ են անդրադառնում նշված պայմանագրին այն ենթատեքստում, թե այն միակողմանի բնույթ է կրում և ՌԴ շահերը պահանջում են դուրս գալ համաձայնությունների շրջանակներից: Որպես հիմնավորում նշվում են Ռուսաստանի հարավային հարևանների մոտ (Չինաստանում, Պակիստանում և Իրանում) նման հեռահարության հրթիռների առկայությունը: Նման հրապարակումներով ՌԴ-ն փորձում է տեղեկատվական ճնշում գործադրել եվրոպական երկրների վրա (որոնք Ռուսաստանում նման տիպի հրթիռների առկայությունից ամենից շատն են վտանգվելու), որպեսզի վերջիններս դիմադրեն ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղակայմանը և ԵՄ շրջանակներում ճնշումներ իրագործեն Լեհաստանի և Չեխիայի վրա: Ինչպես հայտնի է, վերջիններիս կառավարություններն ԱՄՆ-ի հետ արդեն ստորագրել են համապատասխան երկկողմանի համաձայնագրեր (բնորոշ է, որ զարգացումներն այդ հարթությունում ընթանում են ՆԱՏՕ շրջանակներից դուրս, քանի որ ԱՄՆ ազդեցությունն այդ կազմակերպությունում նվազելու միտում է ցուցաբերում):

- «Հակամարտողների մեկուսացման» անթույլատրելիությունը, քանի որ կարգավորմանը կարող է հանգեցնել միայն նրանց ներգրավումը կարգավորման գործընթացին (այս ենթաբաժնում հիշատակվում են նաև անդրկովկասյան հակամարտությունները և Կոսովոն, որին անկախություն շնորհելը, համաձայն ՌԴ ԱԳՆ-ի, անընդունելի է և «հղի լուրջ բարդություններով Եվրոպայի կայունության համար»:

Փաստաթղթի վերոնշյալ ենթաբաժնում Իրաքում տիրող իրավիճակի վերաբերյալ նշվում է, որ այդ երկրում Ալ-Մալիքիի շիական կառավարությանը Վաշինգտոնի և Թեհրանի կողմից զուգահեռ տրամադրվող աջակցությունը պետք է ընդունել որպես կառուցողական հանգամանք: Նման փոքր-ինչ ավելորդ լավատեսական մոտեցումը հայտնի է վերլուծաբանական հանրությունում և ընկալվում է որպես հնարավոր եզր ԱՄՆ-Իրան հարաբերությունների կարգավորման տեսակետից: Սակայն փաստաթղթի հեղինակները մոռանում են, որ նման սցենարը գոնե այսօր ամերիկացիների կողմից դիտարկվում է Իրանի ներկայիս վարչակազմի տապալումից (և գուցե անգամ երկրի մասնատումից) հետո միայն:

Հայեցակարգում հանգամանորեն ներկայացված են առանձին տարածաշրջանների և երկրների հանդեպ ՌԴ արտաքին քաղաքականության ուղենիշները: Ընդգծվում է այն հայտնի դրույթը, թե ԱՊՀ երկրների հետ հարաբերությունները ՌԴ-ի համար առաջնային են, իսկ անդրկովկասյան տարածաշրջանը ՌԴ ***«տարածքային ամբողջականության»*** և անվտանգության տեսակետից առանցքային նշանակություն ունի: Այդ բաժնում ներկայացված են հայտնի սկզբունքային և անզիջում մոտեցումները Վրաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, իսկ վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների կապակցությամբ նշվում է, որ դրանք պետք է լուծվեն «բացառապես խաղաղ եղանակով»՝ հաշվի չառնելով «ժամանակային և կարգավիճակային շրջանակները»: Հատկանշական է, որ ***փաստաթղթում Լեռնային Ղարաբաղի կարգավորումը (այն չի անվանվում հակամարտություն) համարվում է ոչ այնքան սուր խնդիր,*** որը պետք է լուծվի ՀՀ-Ադրբեջան[1] ուղիղ բանակցությունների միջոցով, որոնց ընթացքին պետք է աջակցեն Մոսկվան, Փարիզը և Վաշինգտոնը (ԵԱՀԿ շրջանակներում):

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

[1] Փաստաթղթում Ադրբեջանն անվանվում է ռազմավարական գործընկեր, իսկ Հայաստանը՝ դաշնակից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ԻՐԱՆԻ ՓՈԽԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Ապրիլի 10-ին իրանական կողմի նախաձեռնությամբ դեսպանատանը տեղի ունեցավ մոտ 1,5-ժամյա հանդիպում Իրանի փոխդեսպան Ալի Աքբար Ջոուհարի հետ: Վերջինիս տված հարցերը հիմնականում վերաբերում էին ՀՀ ներքաղաքական կյանքին: Քննարկվեցին նաև տարածաշրջանային որոշ խնդիրներ՝ կապված ԱՄՆ-Իրան, Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունների հետ, ընդհանուր բնույթի կարծիքներ արտահայտվեցին Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության, ինչպես նաև Ուկրաինայում ընթացող զարգացումների վերաբերյալ:

Փոխդեսպանն առանձնապես հետաքրքրվում էր.

1. Նախընտրական զարգացումներով, Նախագահ-Վարչապետ հարաբերություններով և նրանց քաղաքական ապագայով, մասնավորապես կարևորվում էր, թե արդյոք Նախագահը կերկարաձգի իր պաշտոնակատարման ժամկետը (այս հարցերը քողարկված բնույթ էին կրում, սակայն բազմիցս կրկնվեցին):
2. Թե որ կուսակցությունը՝ ԲՀԿ-ն թե ՀՀԿ-ն, կհաղթի ընտրություններում (խնդիրը ներկայացվեց առաջին հարցի համատեքստում), և արդյոք Հիմնադրամը ներքաշված է նախընտրական գործընթացների մեջ:
3. Ընտրություններում ընդդիմության հնարավորություններով:
4. ՀՀ քաղաքական կողմնորոշումներով (Ռուսաստան-ՆԱՏՕ):

Պատասխանները տրվեցին հետևյալ կերպ (համառոտ).

- Նախագահ-Վարչապետ հարաբերություններում հակասություններ չեն կարող լինել, իսկ նրանց քաղաքական ապագայի մասին վաղաժամ է խոսել մինչև ԱԺ ընտրությունների ավարտը: Միևնույն ժամանակ նշվեց, որ ՀՀ-ում առայժմ միայն այդ երկու անձինք են, որ ունեն քաղաքական-պետական գործունեության մոտ 20-ամյա փորձ և տիրապետում են ԼՂՀ հիմնախնդրի հետ կապված գործընթացներին, այսինքն՝ քաղաքական գործունեությունից նրանց հեռանալն ազգային շահերի տեսակետից նպատակահարմար չէ: Ասվեց նաև, որ թերևս քիչ հավանական է, որ Նախագահի քաղաքական ապագան ընդունի նախագահական պաշտոնավարման ժամկետի երկարաձգման տեսք: Վարչապետի նախագահ ընտրվելու հնարավորությունը մեր կողմից գնահատվեց որպես իրատեսական:
- Հիմնավորվեց, որ ՀՀԿ-ի հաղթելու հնարավորություններն ավելի մեծ են, քան ԲՀԿ-ինը: Նշվեց, որ ԲՀԿ ստեղծումը պայմանավորված է կառուցողական ընդդիմություն ձևավորելու և քաղաքական ընտրանու կազմը մասնակի թարմացնելու նպատակով: Շեշտվեց, որ «Նորավանքն», ըստ իր կարգավիճակի, չի կարող ներքաշվել նախընտրական գործունեության մեջ, սակայն, անշուշտ, հետևում է իրադարձությունների զարգացմանը:
- Ընդդիմության հնարավորությունները գնահատվեցին համեստ, միայն մի քանիսը կարող են հաղթահարել 5%-ի սահմանը (մասնավորապես նշվեցին ՕԵԿ-ը և Ազգային միաբանությունը):
- 4-րդ հարցի կապակցությամբ շեշտվեց ՀՀ քաղաքականության ***փոխլրացման սկզբունքի նպատակահարմարությունը,*** ինչն առիթ տվեց փոխդեսպանին *նշել,* թե «Վարչապետը առավոտյան բանակցում է ՆԱՏՕ-ի պատվիրակության հետ, իսկ երեկոյան սեղանի շուրջ զրուցում ՀԱՊԿ-ի իր բարեկամների շրջապատում»:

Վերջին հարցի առիթով նշենք, որ փոխդեսպանը հանդիպումների ժամանակ մշտապես անդրադառնում է ՀՀ բազմակողմ քաղաքականության խնդիրներին, երբևիցե քննադատաբար չի արտահայտվում արևմտյան տերությունների վերաբերյալ, սակայն *տանում է այն գիծը, թե ռուսները գուցե այնքան էլ հուսալի գործընկերներ չեն:* Ի դեպ, Ջոուհարը ժամանակին աշխատել է Իրանի Մոսկվայի դեսպանատանը և ռուսների մասին այնքան էլ բարձր կարծիք չունի:

АЗЕРБАЙДЖАН ГОТОВИТСЯ К ВОЙНЕ НОВОГО ТИПА

Закупки вооружений Азербайджана за последние годы показывают, что Баку готовится к ведению войны против Нагорного Карабаха с использованием опыта последних региональных конфликтов, когда все больший акцент ставится на применении авиации и дальнобойных артиллерийских и ракетных систем.

Осуществляемые Азербайджаном активные закупки наступательных видов вооружений вызвали даже озабоченность в международных структурах. Так, 17 марта специальный представитель генерального секретаря НАТО по Южному Кавказу и Средней Азии Роберт Симмонс во время визита в Баку прямо заявил: «В этом году мы указали Азербайджану, что он сделал большие закупки, превысив квоту ДОВСЕ, и этот вопрос должен быть разрешен в Вене в рамках ОБСЕ».

Азербайджан начал активно закупать ракетные и артиллерийские системы дальнего действия. Так, за последние годы на Украине были закуплены 300-мм РСЗО «Смерч» 9А52, дальность действия которых достигает 70 км, что позволяет использовать эти системы из глубокого тыла для поражения больших площадей (при использовании различных модификаций реактивных снарядов площадь поражения может достигать примерно 70 гектаров).

Таким образом, Баку делает ставку на поражение позиций армянских сил с больших расстояний. При этом армянской стороне ответить будет нечем, так как имеющиеся на вооружении артиллерийские и ракетные системы не позволяют подавлять огонь систем противника, находящихся в глубоком тылу. По информации российской стороны, в Армению были поставлены 8 установок оперативно-тактического ракетного комплекса Р-17 и 32 ракеты к ним (дальность – порядка 500 км.). Однако Армения никогда официально не декларировала Р-17. По сообщениям азербайджанской стороны, часть установок размещена на территории Нагорно-Карабахской Республики и освобожденных территориях.

У армянской стороны есть эквивалентные РСЗО 9А52 четыре (по другим данным - 8) установки 273 мм. РСЗО WM-80 китайского производства. Дальность стрельбы установки достигает 80 км, однако площадь поражения меньше, чем у «Смерч»-ей. Кроме того, WM-80 были закуплены в 1999 году, и с тех пор не появлялось никакой информации о поставках в Армению вооружений подобного типа, что говорит либо о том, что, в лучшем случае, Ереван скрывает подобную информацию, либо армянский генералитет не рассматривает подобные типы вооружений в качестве приоритета. С учетом того, что в последнее время Баку все чаще закупает вооружения в открытую, невзирая на превышение фланговых ограничений и реакцию международного сообщества, сегодня наряду с усилением обороноспособности армии приоритетным становится также и психологический фактор. Баку сейчас активно использует сообщения о закупках вооружений в качестве фактора психологического давления на армянскую сторону, а также смягчения пораженческого комплекса у собственного народа. Молчание официального Еревана, постоянные заявления о намерениях соблюдать ограничения ДОВСЕ (в то время как, например, Россия уже ставит под сомнение смысл фланговых ограничений) при параллельном бряцании оружием Азербайджана может серьезно повлиять на психологический баланс, образовавшийся после победы армянской стороны во время Карабахской войны.

А Азербайджан активно ведет политику наращивания наступательных вооружений, продолжая информационную показательную войну. Ту же цель преследует усиление ВВС Азербайджана. 29 марта азербайджанская сторона провела показательные полеты самолетов МиГ-29,

которые были закуплены на Украине. На сегодняшний день наблюдается серьезный перевес ВВС Азербайджана над армянскими военно-воздушными силами. Армения в основном делает ставку на укрепление сил ПВО в союзе с российской стороной. Армянские ПВО могут стать серьезной угрозой для азербайджанской военной авиации в случаях бомбежек населенных пунктов Нагорного Карабаха и нападения на территорию Армении. Однако большой вопрос: на чьей стороне будет перевес в случае воздушных атак на передовые позиции карабахских сил самообороны. В случае начала военных действий азербайджанская сторона при имеющемся балансе сможет получить полное превосходство в воздухе на ТВД. Ставка армянской стороны на укрепление оборонительных типов вооружений может привести к серьезным потерям, так как в случае применения новых методов ведения боевых действий, включающих в себя использования дальнобойной артиллерии и авиации, простая оборона будет равносильна предоставлению противнику возможности уничтожать армянские войска на расстоянии.

Противопоставить дальнобойным артиллерийским системам Азербайджана можно именно военную авиацию, которая будет иметь возможность уничтожать огневые точки в глубоком тылу. Применение аналогичных систем залпового огня в данном случае способно лишь восстановить баланс сил, но не уменьшить потери армянской стороны.

Наличие дальнобойных систем, конечно же, не решает для Азербайджана вопроса ведения долговременной войны, так как остается проблема обеспечения боеприпасами. Как показал опыт последней войны Израиля в Ливане, сегодня одной из насущных проблем скоротечных столкновений является возможность своевременного обеспечения боеприпасами наступающих войск. По данным израильской прессы, израильская авиация к последним дням войны была уже неспособна выполнять свои задачи, так как были исчерпаны боеприпасы. Для Азербайджана, в случае начала войны, источником быстрых поставок боеприпасов из Турции может стать строящаяся железная дорога Карс-Ахалкалаки-Тбилиси.

Кроме попыток обеспечить серьезный перевес в возможностях ведения «удаленной» войны, Азербайджан активно наращивает вооружения, которые будут задействованы в случае прорыва буферной зоны. Если военные действия переместятся в горные районы, то в этом случае серьезно усилиться роль минометов, которые часто более эффективны при таком рельефе, нежели артиллерия. Азербайджан и здесь добился серьезного перевеса. Баку закупил системы «Нона», способные действовать и как гаубицы, и как минометы с углом вертикального наведения до 80 градусов. По данным *The International Institute for Strategic Studies* (IISS) за 2006г., количество установок «Нона» на вооружении Азербайджана достигает 26 единиц. Эти установки зарекомендовали себя в Афганистане и во время чеченских компаний как серьезное и необходимое в горных условиях вооружение. Максимальная дальность при использовании осколочно-фугасных мин достигает 7,1 км, а при использовании активно-реактивных снарядов – до 12,8 км. «Нона» обладает также особым преимуществом – система позволяет использование 120-122-милиметровых мин производства других стран, а не только российского или украинского производства, что позволит Турции в случае начала боевых действий беспрепятственно поставлять боеприпасы для азербайджанской армии из своих арсеналов, без привлечения третьей стороны.

Кроме того, в 2005г. на Украине были закуплены 72 крупнокалиберных миномета (120 мм.) ПМ-38, за счет чего артиллерийская составляющая азербайджанской армии была еще более усилена, создав серьезный перевес. Так, по данным IISS на 2006г., количество 120-мм минометов на вооружении у ВС Армении достигало всего 19 единиц. Конечно, на вооружении у сил самообороны Нагорного Карабаха также есть определенное количество этого типа вооружений, однако налицо серьезная заявка Азербайджана на достижение качественного перевеса.

С учетом вышесказанного можно предполагать, что Азербайджан, который огромными темпами наращивает военный бюджет, в ближайшие годы будет закупать наступательные воо-

ружения для прорыва армянских линий обороны с минимальным использованием живой силы. Вероятнее всего, расчет делается на параллельные массированные атаки на населенные пункты Нагорного Карабаха, чтобы вынудить мирное население бежать в глубь территории, а затем и в Армению, за счет чего будет подрываться боевой дух армянских сил. Опыт карабахской войны уже показал, что обе стороны наиболее упорно защищали те территории, где продолжало оставаться мирное население, в то время как в случае ухода местных жителей обороняющиеся часто теряли инициативу.

Для армянской стороны в сложившейся ситуации насущной становится необходимость укрепления военно-воздушных сил, на которые будут возложены задачи не только и не столько поддержки войск на ТВД, но и поражения огневых точек противника в глубоком тылу. Одновременно речь должна идти о наращивании артиллерийской составляющей, что позволит обеспечить баланс и не допустить создания возможности ведения односторонних боевых действий с применением дальнобойной артиллерии со стороны противника.

Самвел Мартиросян

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Տարեցտարի առավել որոշակի է դառնում Բաքվի իշխանությունների հստակ և համակարգված աշխատանքն արտերկրում բնակվող ադրբեջանական համայնքները կազմակերպելու և սեփական «սփյուռք» ձևավորելու ուղղությամբ: Հստակ է, որ այս ուղղությամբ ձեռնարկների առաջնահերթ նպատակն է հայկական սփյուռքի դեմ պայքարը, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, եվրոպական պետություններում սփյուռքահայության հայանպաստ լոբբինգի խոչընդոտումը, հակահայ քարոզչական, հասարակական, հնարավորության դեպքում՝ նաև քաղաքական աշխատանքը:

Անցնող տարիների կտրվածքով Բաքուն արդեն հասել է շոշափելի առաջընթացի, և հայկական կողմի համար խիստ նպատակահարմար է թվում առնվազն ուսումնասիրել ադրբեջանական և թուրքական «դիասպորաները», հստակ պատկերացում ունենալ այս կառույցների ներուժի և ծրագրերի վերաբերյալ, հնարավորության սահմաններում մշակել որոշակի հակազդման ռազմավարություն: Ադրբեջանական «սփյուռքն» առավել ակտիվանում է որոշակի տարելիցների օրերին՝ հունվարի 20-ի, Խոջալիի, Արցախյան պատերազմում շրջանների կորստի ամսաթվեր, մարտի 31-ի «Ադրբեջանցիների ցեղասպանության» օր և այլն:

Ադրբեջանական «սփյուռքի» հետ աշխատանքը որակական նոր փուլ մտավ *Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտե* կազմակերպության հիմնադրումից հետո: Պետական կառույցը հիմնվել է 2002թ. հուլիսի 5-ին, Հեյդար Ալիևի հրամանով: Հիմնադրումից ի վեր կառույցը ղեկավարում է Նազիմ Իբրահիմովը: Վերջինս ծնվել է 1963թ. դեկտեմբերի 23-ին Նախիջևանում: Ավարտել է Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտը, զբաղվել է գործարարությամբ, 1997-1999թթ. Ադրբեջանի դեսպանն էր Ուկրաինայում և միաժամանակ Մոլդովայում ու Լեհաստանում, ապա 1999թ. մարտից՝ Բելառուսի Հանրապետությունում: 2000թ. ընտրվել է խորհրդարանի պատգամավոր իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցությունից:

Կազմակերպությունն ունի մոտ 40 աշխատակից: 2005թ. դրությամբ հիմնավորապես նորոգվել է բյուջետային հատկացումների հաշվին, տեխնիկական հագեցվածությունը, ըստ ադրբեջանական մամուլի, բավարար է: Կառույցի կայքէջն է *www.diaspora.az* և *www.diaspora.gov.az:* Սայթերը ադրբեջաներենով ներկայացնում են տեղեկատվություն ադրբեջանական համայնքների վերաբերյալ, ընդհանուր տեղեկություններ Ադրբեջանի Հանրապետության աշխարհագրության, տնտեսության, պատմության, մշակույթի մասին և առանձին բաժնով՝ ԼՂ հակամարտությունը, հունվարի 20-ի դեպքերը և Խոջալիի իրադարձությունները՝ ըստ Բաքվի պաշտոնական դիտանկյունի:

Ադրբեջանական «սփյուռքի» ձևավորման գործընթացն արագացրին, որոշակիորեն «կատալիզատորի» դեր կատարեցին 2 հանգամանք. նախ արտասահմանյան ադրբեջանական միությունները սկսեցին աշխատել արդեն իսկ գործող թուրքական լոբբիստական կազմակերպությունների հետ: Դա հատկապես կայացման փուլում բավական օժանդակեց ադրբեջանական կողմին մասնավորապես կազմակերպչական, իրավաբանական հարցերը կարգավորելու, կապեր հաստատելու խնդիրներում: Սա նաև մեծացրեց ադրբեջանական կառույցների կարողությունները՝ ընդլայնելով հակահայ ճակատը:

Մյուս կողմից՝ Բաքուն փորձում է իր հսկողության տակ առնել արտերկրում գործող իրանական ադրբեջանցիների գաղթօջախները և նրանց ձևավորած միությունները: Եթե հաշվի առնենք, որ իրանական ադրբեջանցիների վտարանդի միությունների աշխատանքը կրում է հիմնականում հակաիրանական բնույթ և վայելում ԱՄՆ հովանավորությունը՝ այս կետում ձևավորվում է ԱՄՆ-Ադրբեջան շահերի ընդհանրություն: Սա լրացուցիչ խթան է Բաքվին՝ առավել ակտիվ աշխատանք կատարելու և ագրեսիվ գործելու համար:

Ըստ լրատվամիջոցների և նշված կայքէջի տեղեկությունների՝ ադրբեջանական համայնքային կազմակերպություններ են գործում հետևյալ պետություններում՝ ԱՄՆ, Ավստրալիա, Ավստրիա, Գերմանիա, Բելառուս, Բելգիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Մեծ Բրիտանիա, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Իսլանդիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Կանադա, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Եգիպտոս, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ուզբեկստան, Պակիստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա, Ուկրաինա, Ճապոնիա, Նոր Զելանդիա, ընդհանուր առմամբ, ըստ նշված կազմակերպության սայթի՝ 36 պետություններում: Այստեղ հնարավոր է ավելացնել նաև Իրանի Իսլամական Հանրապետության անունը, քանի որ տեղի ադրբեջանական մեծաթիվ բնակչությունն ունի հասարակական կազմակերպություններ և լրատվամիջոցներ, որոնց աշխատանքը հստակ համահունչ է Ադրբեջանի պետական շահերին, ունի անջատողական ուղղվածություն:

Ներկայացնելով ադրբեջանական կազմակերպությունները՝ նշենք, որ առավել շոշափելի հաջողություններ են գրանցվել ՌԴ-ում, Ուկրաինայում, Շվեդիայում, Ֆրանսիայում, առկա է առաջխաղացում ԱՄՆ-ում:

ԱՄՆ-ում գործող *Ամերիկայի ադրբեջանական համայնք* կազմակերպությունը հիմնադրվել է դեռևս 1956թ. մուսավաթական Ադրբեջանի վարչապետ Մեմեդ-Էմին Ռասուլզադեի կողմից: Ներկայումս ԱՄՆ ամենաակտիվ ադրբեջանական միությունն է, ղեկավարում է Թոմրիս Ազերին: ԱՄՆ-ում գործում է նաև *Ադրբեջանցի հրեաների միությունը,* որը հիմնականում Բաքվից ԱՄՆ փոխադրված հրեաների կառույց է: Ղեկավարն է Յակով Աբրամովը: Հրեական միությունների և բուն Իսրայելի հետ սերտանալու ադրբեջանական կողմի քաղաքականությունը միանգամայն հստակ է ուրվագծվում: Իրանի ուղղությամբ շահերի որոշակի համադրման և Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել ռազմավարական եռանկյունու ձևավորման կողքին այստեղ միանշանակ է նաև հրեական լոբբինգի հետ «մտերմանալու» և վերջիններիս հակահայ աշխատանքների մեջ հնարավորինս ներգրավելու Բաքվի ձգտումը:

ՌԴ-ում գործում է 2 համառուսաստանյան ադրբեջանական միություն՝ *Համառուսաստանյան ադրբեջանական խորհրդաժողով* (ՀԱԽ) և *Ազեռոս* միություն: Առաջինը հստակ աշխատում է Բաքվի հետ համատեղ, երկրորդն առավել ինքնուրույն է: Կազմակերպությունների միջև առկա են մրցակցություն և որոշակի անբարյացակամ մթնոլորտ: ՀԱԽ հովանավորներից է Մոսկվայում բնակվող գործարար Արազ Աղալարովը, որի որդին ամուսնացել է Ալիևի դստեր հետ: Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով՝ ՌԴ 100 ամենահարուստ անձանց շարքում նշվում է նաև Աղալարովի անունը: Նրան են պատկանում *Կոմտեք* համակարգչային տեխնոլոգիաների ցուցահանդեսային կենտրոնը, Մոսկվայի Ստոլեշնիկով և Պետրովկա փողոցների խաչմերուկում գտնվող էքսկլյուզիվ համարվող կոշկեղենի խանութը, «Աղալարով» բնակելի համալիրը, 66 հազար կմ^2 տարածքով առևտրի կենտրոնը: 75 հա հողատարածքի վրա Աղալարովը կառուցել է *«Կոկուս սիթի»* ցուցահանդես-վաճառքի համալիրը, որը նաև նորաձևության խոշոր կենտրոն է:

«Զերկալո» թերթին տված հարցազրույցում Աղալարովը հայտարարել է, թե յուրաքանչյուր տարի ՌԴ ունևոր մի քանի ադրբեջանցիներ ՀԱԽ-ին հատկացնում են մինչև $100 հազար:

«Ֆորբսը» Աղալարովի ունեցվածքը գնահատում է $360 մլն և միաժամանակ նշում, որ իրականում կապիտալն ավելի մեծ է և 3-4 տարում կհատի 1 մլրդ-ի սահմանագիծը:

Ֆրանսիայում գործում են 11 ադրբեջանական միություն, որոնցից 6-ը՝ եվրոպական վարչական կենտրոններից մեկը հանդիսացող Ստրասբուրգում: Սա մտածված ձեռնարկ կարելի է համարել, ինչը վերստին վկայում է, որ ադրբեջանական «սփյուռքի» կայացումը զարգանում է պետական ստրատեգիայի շրջանակում: Տեղին է նաև նշել, որ արտասահմանում գործող ադրբեջանական կազմակերպությունների մեծ մասը հիմնադրվել է 2002թ. և հետագա տարիներին, այսինքն՝ Բաքվում վերոնշյալ պետական կոմիտեի հիմնադրումից հետո:

Ադրբեջանական գաղթօջախների թեման դարձել է նաև երկրի մի շարք լրատվամիջոցների մշտական ուշադրության առարկան: *Ազերթաջ* պետական լրատվական գործակալության կայքէջում *(www.azertag.az)* գործում է «Դիասպորա» առանձին խորագիրը: Հատկապես

«Զերկալո» և «Էխո» թերթերում թեման բավական հաճախ է շոշափվում, ինչը, հնարավոր է, պետական իշխանությունների «պատվերի» շրջանակում է արվում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ում գործող *Թուրք-ամերիկյան միությունների դաշնություն (ATAA- Assembley of Turkish American Associations)* թուրքական լոբբիստական կառույցի ղեկավար Էրջյումեն Քըլըչը ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության օրինագծի արծարծման կապակցությամբ Թուրքիայի *TGRT* հեռուստաալիքին տված հարցազրույցում նշել էր, որ «Ադրբեջանի պարագայում սեփական գաղթօջախների հետ աշխատանքն առավել կազմակերպված և համակարգված բնույթ է կրում, քան Թուրքիայում»: Փոքր-ինչ բացելով փակագծերը՝ Քըլըչը ընդգծել էր, որ ադրբեջանական համայնքները մշտական կապի մեջ են իշխանությունների հետ, և աշխատանքն ուղղորդվում է:

Նազիմ Իբրահիմովը հարցազրույցներից մեկում նշել է, որ նախատեսվում է արտերկրում գործող ադրբեջանական բոլոր դեսպանատներում մեկական դիվանագետի հանձնարարել համակարգել սփյուռքի ուսումնասիրությունը և աշխատանքների կազմակերպումը: Վերը նշված փաստերը, ինչպես և այն հանգամանքը, որ ադրբեջանական գաղթօջախների կազմակերպումն Ադրբեջանի Հանրապետության անվտանգության հայեցակարգի բաղկացուցիչն է, միանշանակ են դարձնում, որ Բաքուն շարունակելու է նպատակային աշխատանքը և արձանագրելու է շարունակական առաջընթաց: Այս առումով սփյուռքահայության և ադրբեջանա-թուրքական համայնքների դիմակայությունը, վերջիններիս ուղղորդված հակահայ աշխատանքն առաջիկա տարիներին կդառնա ՀՀ առջև կանգնած մարտահրավերներից մեկը:

Հայկարամ Նահապետյան

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Թեև մարտի 29-ին Պենտագոնը հայտարարեց Պարսից ծոցի շրջան *«Nimitz»* ավիակրի գլխավորությամբ ռազմանավերի նոր խումբ ուղարկելու մասին[1]՝ տարածաշրջանում ամերիկյան ավիակիր խմբերի թիվը հասցնելով երեքի[2], իսկ ապրիլի 6-ին ամերիկյան *«NBC»* հեռուստաալիքը հաղորդեց Իրաք լրացուցիչ 12 հազար զորք ուղարկելու Բուշ-կրտսերի վարչակազմի ծրագրերի վերաբերյալ[3], սակայն հիմքեր կան պնդելու, թե Վաշինգտոնում քաղաքական որոշում է կայացվել Իրաքից ամերիկյան զորքերի մոտալուտ դուրսբերման մասին։

Հավանական է, որ այդ որոշումը կայացվել է դեռևս 2006թ. նոյեմբերի 7-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից առաջ։ Ընտրությունների հաջորդ օրը Վաշինգտոնում իրաքյան կամպանիայի պատասխանատու, ԱՄՆ պաշտպանության այն ժամանակվա նախարար Դոնալդ Ռամսֆելդի պաշտոնանկությունը պետք է գնահատել ոչ այնքան ներքաղաքական տեղաշարժի արդյունք[4] (մինչև նոյեմբերի 7-ը արդեն իսկ, ընդհանուր առմամբ, հայտնի էին ընտրությունների արդյունքները)[5], որքան ԱՄՆ իրաքյան ռազմավարության մեջ տեղի ունեցող փոփոխության ցուցիչ։ Պատահական չէ, որ 2006թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից ի վեր ամերիկյան տեղեկատվական հոսքերում աստիճանաբար ավելի մեծ տեղ է հատկացվում Իրաքից Միացյալ Նահանգների զորքերի դուրսբերման հարցին[6]։

Միակ կետը, որ միգուցե շարունակում է անորոշ մնալ, Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման վերջնաժամկետի հարցն է։

Իրաքում տեղակայված ԱՄՆ զինուժի կորուստները շարունակվում են, և այդ առումով Պենտագոնը չի կարողանում լուծել իր առջև դրված խնդիրը։ Հետևաբար, զուտ ռազմական տեսանկյունից Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերումը կարող է հիմնավորված լինել եթե ոչ 2007թ., ապա 2008-ից հետո սկսած ամեն տարի։

Միացյալ Նահանգների ներքին քաղաքականության առումով իրավիճակն ավելի որոշակի է։ 2008թ. նախագահական ընտրություններին դեմոկրատների հաղթելու շանսերն անհամեմատ ավելի բարձր են, այսինքն՝ 2009 թվականը Վաշինգտոնում, ամենայն հավանականությամբ, ամրագրված է որպես զորքերի դուրսբերման վերջնաժամկետ։ Ինտրիգային միակ կետը կարող է լինել 2008թ. Իրաքից զորքերի դուրսբերման հավանականությունը։ Քանի որ 2008թ. կայանալու են նաև Կոնգրեսի հերթական ընտրությունները, ապա հանրապետականներն առնվազն փորձելու են 2009թ. մուտք գործել հնարավորինս քիչ կորուստներով, և չի բացառվում, որ Բուշ-կրտսերի վարչակազմն արդեն 2008թ. սկսի Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման գործընթացը։

---

[1] *«Nimitz»* ավիակրի գլխավորած ռազմանավերի խումբը ԱՄՆ խաղաղօվկիանոսյան Սան Դիեգո նավահանգստից շարժվեց ապրիլի 2-ին և Պարսից ծոց է հասնելու մայիսի սկզբներին։

[2] Չնայած պաշտոնական Վաշինգտոնի ներկայացմամբ՝ *«Nimitz»-ի* գլխավորած խումբը պետք է փոխարինի Պարսից ծոցում գտնվող *«Dwight D. Eisenhower»* ավիակրի առաջնորդած ռազմանավերի խմբին և միանա *«John C. Stennis»* ավիակրի ղեկավարությամբ գործող զորամիավորմանը, սակայն չպետք է բացառել, որ *«Nimitz»-ը* կարող է նաև գալ լրացնելու տարածաշրջանում արդեն իսկ առկա երկու ավիակիր խմբերին։

[3] *«NBC»-ի* ներկայացմամբ՝ այդ 12 հազարը չեն մտնում այն 21,5 հազարանոց զորամիավորման մեջ, որն, ըստ 2007թ. հունվարի 11-ին ԱՄՆ նախագահի կողմից ներկայացված իրաքյան նոր ռազմավարության, պետք է ուղարկվի Իրաք։

[4] Մինչև 2006թ. նոյեմբերի 7-ի ընտրությունները Ռամսֆելդի պաշտոնանկությունը կնշանակեր իրաքյան կամպանիայի ձախողման հրապարակային ընդունում, ինչն էլ ավելի կբարդացներ հանրապետականների վիճակն ընտրություններում։

[5] Հիշեցնենք, որ այդ ընտրությունների արդյունքում դեմոկրատները մեծամասնություն կազմեցին Կոնգրեսի երկու պալատներում՝ Ներկայացուցիչների տանը և Սենատում։

[6] Այդ առումով պետք է շրջադարձային կետ համարել ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ու նախկին կոնգրեսական Լի Համիլթոնի գլխավորած *«Iraq Study Group»-ի* պատրաստած զեկույցի հրապարակումը 2006թ. դեկտեմբերի 6-ին։ Զեկույցն առաջարկում էր մինչև 2008թ. Իրաքից դուրս բերել ամերիկյան զորքերը և հակամարտության կարգավորման գործում ներգրավել նաև Իրանին ու Սիրիային։

Հարցը կախված է նաև մերձավորարևելյան զարգացումներից: Ներկայումս ամերիկյան դիվանագիտության հիմնական նպատակն է 2008-2009թթ. համար ստեղծել այնպիսի իրավիճակ, որ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման որոշման վրա մերձավորարևելյան գործոններն ունենան առավելագույնս սահմանափակ ազդեցություն:

Ցուցիչները

Անցած մի քանի շաբաթների ընթացքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ոչ միայն թույլ են տալիս խոսել Իրաքից ամերիկյան զորքերի առաջիկա դուրսբերման մասին, այլև այդ առումով պետք է ընկալվեն որպես ցուցիչներ:

Առաջնային ցուցիչը բրիտանական քաղաքականության մեջ նկատված փոփոխությունն է: Դեռևս Բեյքեր-Համիլթոն խմբի ծավալած գործունեության շրջանից Թոնի Բլերի կառավարությունն առանձնացավ Իրաքում ԱՄՆ ու նրա դաշնակիցների վարած քաղաքականության վերանայման հարցում: Այդ իմաստով անսպասելի չէր 2007թ. փետրվարի 21-ին բրիտանական վարչապետի հայտարարությունը, թե Լոնդոնը ձեռնամուխ է լինում Իրաքում տեղակայված իր ռազմուժի աստիճանական դուրսբերմանը՝ արդեն 2007թ. ընթացքում Իրաքի հարավում գործող բրիտանական 7100-ոց զորախումբը կրճատելով 1600 հոգով:

Իրաքյան խնդրում բրիտանական քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը հատկապես ակնառու դարձավ մարտի 23-ին իրանցիների կողմից ձերբակալված բրիտանացի 15 նավաստիների շուրջ ծավալված զարգացումներում: Թեև ապրիլի 4-ին Թեհրանն ազատ արձակեց նավաստիներին, սակայն ճգնաժամից իրանական կողմը դուրս եկավ առավելապես շահած կարգավիճակով.

- տեղեկատվական հարթությունում Թեհրանն առավելություն ձեռք բերեց, քանի որ Իրանի միջուկային ծրագրի շուրջ առկա միջազգային լարվածության ֆոնին իրանական կողմի *նախաձեռնած* ակցիայի նման՝ խաղաղ ու բրիտանական կողմի համար ավելի զիջողական ավարտը մի զգալի մասով արժեզրկեց ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից Իրանի դեմ ծավալված տեղեկատվական-հոգեբանական կամպանիան,
- իրանական կողմն ունեցավ կոնկրետ ձեռքբերում. չնայած մարտի 31-ին ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչ Շոն Մըքքորմակը հայտարարեց, թե Վաշինգտոնը չի ծրագրում 15 բրիտանացիներին փոխանակել 2007թ. հունվարի 11-ին ու փետրվարի 4-ին հյուսիսիրաքյան Էրբիլ քաղաքում ու Բաղդադում ձերբակալված իրանցի 6 դիվանագետների հետ, սակայն ապրիլի 3-ին Իրաքում ազատ արձակվեց դեռևս փետրվարի 4-ին Բաղդադում ձերբակալված Իրանի դեսպանատան երկրորդ քարտուղար Ջալալ Շարաֆին. չի բացառվում, որ Շարաֆիի ազատ արձակումը հնարավոր է եղել Վաշինգտոնի նկատմամբ Լոնդոնի գործադրած ճնշման արդյունքում,
- բրիտանացի 15 նավաստիների հետ կապված ամերիկա-բրիտանական հակասությունների մասին է վկայում հատկապես ապրիլի 3-ին Լոնդոնում լույս տեսնող *«The Independent»* օրաթերթի հրապարակումը, ըստ որի՝ իրանցիների կողմից բրիտանացի նավաստիների ձերբակալումը պատասխանն էր 2007թ. հունվարի 11-ին հյուսիսիրաքյան Էրբիլ քաղաքում ամերիկյան հատուկ նշանակության ջոկատի գործողության, որի արդյունքում թեև ձերբակալվեցին իրանցի 5 դիվանագետներ, սակայն ամերիկյան ուժերի թիրախն էին Քուրդիստանի վարչակազմի հետ բանակցություններ վարելու նպատակով քաղաքում գտնվող Իրանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Մոհամադ Ջաֆարին և Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության ղեկավար Մինոջախար Ֆրուզանդուն. ակնհայտ է, որ նշված տեղեկությունը *«The Independent»-ը* կարող էր ստանալ առաջին հերթին բրիտանական հետախուզությունից,
անվամբ, սակայն այն ժամանակ նախագիծը դեռևս Վաշինգտոնի «օքեյը» չուներ: Ռիադի գագաթաժողովում ծրագիրը (որի վերաբերյալ դրական է արտահայտվել նաև Քոնդոլիզա Ռայսը, ինչպես նաև ՄԱԿ գլխավոր քարտուղարը) ընդունվեց առանց ձևափոխման, ինչի անհրաժեշտությունը պնդում էին իսրայելցիները:

Արաբական նախաձեռնությունը նկատի է առնում համակողմանի խաղաղության հաստատում կամ *հող՝ խաղաղության դիմաց* դրույթի ընդունում, բոլոր արաբական երկրների կողմից Իսրայել պետության ճանաչում՝ պայմանով, որ վերջինս դուրս գա 1967թ. գրավյալ արաբական տարածքներից, իսկ պաղեստինցի փախստականների խնդրին տրվի արդար լուծում:

Ռիադի գագաթաժողովը կոչ արեց պաղեստինյան ազգային միասնության կառավարությանը՝ հետևել համաարաբական խաղաղ ռազմավարությանը և համաարաբական խաղաղության ծրագրին: Ի դեպ, խաղաղությունը պետք է լինի միակ ընտրությունը նաև մյուս հիմնահարցերի դեպքում:

Գագաթաժողովը հայտարարեց, որ աջակցում է Պաղեստինի ազգային միասնության կառավարությանը: Գրեթե բոլոր բանախոսներն անընդունելի համարեցին Պաղեստինի Ինքնավարության բյուջեի դեմ Արևմուտքի պատժամիջոցները: Այս կապակցությամբ ընդունվեցին «Պաղեստինի ազգային միասնության կառավարությանն աջակցելու մասին» և «Պաղեստինի ազգային վարչակազմի բյուջեին և պաղեստինցի ժողովրդի տոկունությանն աջակցելու մասին» բանաձևերը:

Ռիադի գագաթաժողովը մեղադրեց ԱՄՆ-ին Իրաքի օկուպացման համար՝ անհրաժեշտ համարելով օտար զորքերի դուրսբերումը, Լիբանանում, Սուդանում և Սոմալիում ստեղծված վիճակի համար մեղավոր ճանաչվեցին արտաքին ուժերը: Ինչպես միշտ, ընդունվեցին «Սիրիական արաբական Գոլանի բարձունքների գրավման մասին», «Լիբանանի հետ համերաշխության և նրան աջակցելու մասին», «Իրաքի իրավիճակի մասին», «Իրանի կողմից Արաբական Միացյալ Էմիրություններին պատկանող Արաբական ծոցի (Պարսից ծոցի- *Ա.Փ.)* երեք կղզիների՝ Մեծ և Փոքր Թոմբի և Աբու Մուսայի գրավման մասին» բանաձևերը:

Հատկանշական է, որ Ռիադի հանդիպման գրեթե բոլոր բանաձևերում առաջ քաշվեց *ստատուս քվոյին* վերադառնալու անհրաժեշտությունը, այսինքն՝ այն վիճակին, որ գոյություն էր ունեցել նախքան ճգնաժամերի սկզբնավորումը:

Կարևոր էր գագաթաժողովում «Արաբական ազգային անվտանգության» մասին բանաձևը: Դրանում նշված է, որ ԱՊԼ անդամ պետությունները խնդիր ունեն պահպանելու իրենց անվտանգությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը և աջակցելու տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը: Նրանք պետք է ամրապնդեն միջպետական կապերը, իսկ իրենց միջև ծագող հակամարտությունները կարգավորեն խաղաղ ճանապարհով: Այսինքն՝ ԱՊԼ անդամ պետությունները պետք է ձգտեն արաբական ռեգիոնում պահպանել *ստատուս քվոն* իր ներկա սահմաններով ու առկա վարչակարգերով:

Ընդունվեց նաև «ԱՊԼ անդամ պետություններում ատոմային էներգիայի խաղաղ զարգացման մասին» բանաձևը, որտեղ նշված է, որ ատոմային էներգիայի խաղաղ զարգացման ծրագիրը պետք է հիմնված լինի միջազգային համաձայնագրերի և փաստաթղթերի վրա: Մի շարք դրույթներ ընդունվեցին միջարաբական տնտեսական կապերի զարգացման վերաբերյալ: Այս առումով նշենք, որ տարիներ շարունակ թղթի վրա է միասնական արաբական շուկայի ստեղծման գաղափարը:

Մարտահրավերներ արաբական աշխարհին. արաբական համերաշխության նշանակությունը

Գագաթաժողովում վերստին արձանագրվեց, որ մերձավորարևելյան տարածաշրջանը հայտնվել է ծանր իրավիճակում: Ռիադի հռչակագրում մասնավորապես նշված է. «Մեր տարածաշրջանը հայտնվել է վտանգավոր իրավիճակում. արաբական հայրենիքը ենթարկվում է բռնության, արաբական ռեսուրսները վատնվում են, սպառնալիքի տակ են արաբական ինքնությունը և մշակույթը…»:

Աբդալլահ թագավորը, գագաթաժողովի բացման իր խոսքում մատնանշելով արաբական աշխարհի կնճռոտ խնդիրները, խոստովանեց, որ իրենք հայտնվել են մի իրավիճակում, որ չեն կարող ոչինչ անել իրենց եղբայրներին օգնելու համար: Արաբական աշխարհը, ըստ նրա, մատնված է եղել անգործության, որի պատասխանատվությունն ընկած է ոչ թե լիգայի, այլ արաբ ղեկավարների վրա, որոնք միմյանց հետ հակասություններ ունեն: Սակայն սխալ կլինի կարծել, թե տարաձայնությունն արաբների ճակատագիրն է: Արաբական աշխարհը պետք է անի առաջին քայլը՝ վերադարձնելու հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Ռիադի գագաթաժողովն ակնհայտ դարձրեց, որ արաբ առաջնորդները ցանկանում են իրենք իրենց ուժերով վճռել արաբական աշխարհին վերաբերող խնդիրները, ինչը, սակայն, անիրական է թվում՝ հաշվի առնելով հակամարտությունների կարգավորման մենաշնորհն իր ձեռքում կենտրոնացրած միաբևեռ ուժային կենտրոնի առկայությունը: Այս տեսանկյունից հետաքրքրական է Սաուդյան Արաբիայի արտգործնախարար Սաուդ Ալ-Ֆեյսալի՝ «Նյուսվիքին» տված հարցազրույցը: Ըստ նրա՝ արաբական աշխարհում գործողությունները զարգանում են այնպես, կարծես թե այստեղ ժողովուրդներ չեն ապրում, որ ունենան սեփական անկախ ցանկություններ կամ որոնք ի վիճակի լինեն պաշտպանել իրենց հետաքրքրությունները և իրենց տարածքները:

Արաբական աշխարհում ստեղծված խնդիրները, միջարաբական և միջդավանական հակասությունները, ըստ արաբ առաջնորդների, ունեն իրենց պատճառները: Խնդիրն այն է, որ արաբական աշխարհը կորցրել է սեփական ինքնության զգացողությունը, այդ իսկ պատճառով պետք է փորձի վերակենդանացնել արաբական համերաշխության ոգին, վերանայի իր կողմնորոշումները, և որ ամենակարևորն է՝ կարողանա որդեգրել *միասնական համաարաբական դիրքորոշում:*

Արաբների, արաբական քաղաքակրթության և առհասարակ իսլամական աշխարհի նկատմամբ ձևավորված ֆոբիաներին ի պատասխան՝ հռչակագրում նշված է, որ արաբական աշխարհը գործում է չափավորության, հանդուրժողականության և երկխոսության դիրքերից, մերժում է ահաբեկչության և ծայրահեղականության բոլոր ձևերն ու ռասիստական միտումները:

Արաբական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը հայտարարում է, որ անընդունելի է համարում այն քայլերը, որոնք փորձում են կասկածի տակ դնել իրենց արժեքները, արատավորել իրենց կրոնն ու սրբատեղիները, միջդավանական հակասություններ հրահրել, որոնք քաղաքական նպատակ ունեն և միտված են բաժանելու ազգը: Միասնականության և համերաշխության հասնելու նպատակով արաբները պետք է խաղաղ ճանապարհով կարգավորեն բոլոր հակասություններն անդամ պետությունների միջև և հասարակությունների ներսում:

Թուրքիայի վարչապետը՝ Ռիադի գագաթաժողովում

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ով Աբդալլահ թագավորի անձնական հյուրն էր, հանդես գալով Ռիադի գագաթաժողովի բացմանը՝ նշեց, որ արաբական գագաթաժողովներին Թուրքիայի ներգրավումը վկայում է այդ երկրի և արաբական երկրների միջև հարաճուն համագործակցության մասին: Նա խոսեց դեռևս օսմանյան շրջանում սկիզբ առած թուրք-արաբական կապերի մասին: Էրդողանի խոսքերով՝ իր երկիրը կարևոր դեր է խաղում տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ամրապնդման հարցում:

Թուրքիայի վարչապետի ելույթի ամենակարևոր դրույթներից մեկը կապված էր նոր պաղեստինյան կառավարությանն աջակցելու Թուրքիայի որոշման հետ: Նա նույնիսկ Իսմայիլ Հանիյային հրավիրեց Անկարա: Ինչ վերաբերում է իրաքյան խնդրին, ապա, Թուրքիայի կարծիքով, Իրաքը կարիք ունի ուժեղ կառավարության, որպեսզի հնարավոր լինի երկրում հասնել կայունության և խաղաղության:

Էրդողանը հաստատեց, որ Թուրքիան շարունակելու է աջակցել տարածաշրջանի բոլոր խնդիրներին՝ համագործակցելով արաբական երկրների հետ: Նա նշեց, որ իրենք պետք է միացյալ ուժերով պայքարեն նաև ահաբեկչության դեմ:

Հատկանշական է, որ Թուրքիայի վարչապետն առաջին անգամ էր մասնակցում արաբական բարձր մակարդակի հանդիպմանը: Վերջին շրջանում նկատվում է Թուրքիայի և արաբական աշխարհի մերձեցման միտում: Նախկինում արաբական/իսլամական աշխարհը բավական վերապահ մոտեցում ուներ Թուրքիայի նկատմամբ՝ հաշվի առնելով օսմանյան տիրապետության պատմական հիշողությունը, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր ոլորտներում Իսրայելի և ԱՄՆ-ի հետ Թուրքիայի համագործակցությունը:

Արաբական աշխարհի հետ մերձեցման ամենակարևոր հանգրավաններից մեկը կապված է թուրք-սիրիական հարաբերությունների հետ: 1960-1970-ականներից քրդական խնդրի և ջրի գործոնի պատճառով բավական վտանգավոր, առանձին դեպքերում՝ նույնիսկ փակուղի մտած թուրք-սիրիական հարաբերություններն աստիճանաբար բարելավվեցին արդեն Բաշար Ալ-Ասադի իշխանության գալուց՝ 2000 թվականից հետո: Սիրիայի և Թուրքիայի միջև կնքվեցին բազմակողմ համագործակցության պայմանագրեր:

Հարկ է նշել նաև, որ 2004-ից մինչև օրս իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղարը Թուրքիայի ներկայացուցիչ, արաբագետ Էքմալուդդին Իհսանօղլուն է, ով արաբական աշխարհում բավական համարում ունեցող գործիչ է և զգալի դեր է կատարում արաբական շրջանակներում թուրքական (նաև՝ ադրբեջանական) քարոզչության ուղղությամբ:

Հատկանշական է, որ թուրքական կողմին գագաթաժողովի հրավիրած Սաուդյան Արաբիան այն բացառիկ իսլամական երկրներից է, որը դեմ է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, ինչը պայմանավորված է Ղարաբաղյան հակամարտությամբ:

Ներկայումս Թուրքիայի համար կան հանգուցային նշանակություն ունեցող մի շարք հարցեր, այդ թվում՝ քրդական խնդիրը, որը բխում է նաև արաբական առանձին երկրների, ինչպես նաև Իրանի շահերից: Միևնույն ժամանակ, Թուրքիայի արտաքին քաղաքականության արաբական ուղղության մեջ ի հայտ եկած նոր միտումները որոշակի խնդիրներ են ստեղծում Իսրայելի և ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում:

Հետևություններ

1. Հայաստանի շահերից չի բխում Թուրքիայի և արաբական աշխարհի մերձեցումը: Արաբական աշխարհը համարվում է իսլամական աշխարհի այն կարևոր բաղադրիչը, որի հետ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ ունի, և որտեղ մեծ թվով հայկական գաղութներ կան: Արաբական երկրներից շատերը միջազգային ասպարեզում մինչև վերջերս աջակցում էին Հայաստանին (չնայած ի պաշտոնե ղարաբաղյան հարցում արաբական երկրներն առաջնորդվում են իսլամական համերաշխության սկզբունքով): Դեռևս 1997թ. մարտին Կահիրեում Արաբական պետությունների լիգայում տեղի ունեցավ Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված հատուկ նիստ՝ ԱՊԼ գլխավոր քարտուղար Իսմաթ Աբդ Ալ-Մագիդի նախագահությամբ և Լիգայում հավատարմագրված 22 դեսպանների մասնակցությամբ, որտեղ հնչեցին հայանպաստ ելույթներ: Առաջին անգամ էր, որ ոչ արաբական երկրի ներկայացուցիչը (տվյալ դեպքում՝ ՀՀ արտգործնախարար Ա.Արզումանյանը) լիգայում ներկայացնում էր իր երկրի պաշտոնական տեսակետը: Աստիճանաբար արաբական աշխարհում ակտիվանում են Ադրբեջանի դիրքերը, ինչի հարցում նրան էապես աջակցում է Թուրքիան:
2. Ռիադի գագաթաժողովի ուղղվածությունը շատ դեպքերում պայմանավորված էր տարածաշրջանի հանգուցային խնդիրների նկատմամբ Սաուդյան Արաբիայի դիրքորոշմամբ: Աստիճանաբար ակնհայտ է դառնում, որ ՍԱԹ-ը հավակնում և գործնականում փորձում է հիմնավորել տարածաշրջանային կարևոր դերակատար դառնալու իր նշանակությունը: Սաուդցիներն արդեն իրականացրել են մի շարք գործնական քայլեր: Ռիադի հանդիպման շրջանակներում սաուդական Աբդալլահ թագավորին հաջողվեց, որպեսզի Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը համաձայնի ուղիղ բանակցություններ սկսել Լիբանանի վարչապետ Ֆուադ Սինիորայի հետ, ով Դամասկոսին մեղադրում է իր

երկրի գործերին միջամտելու, այդ թվում՝ Ռաֆիկ Հարիրիի սպանությանը մասնակից լինելու մեջ: Նշենք, որ Սաուդյան Արաբիան բավական մեծ դերակատարում ունի ներլիբանանյան զարգացումներում և մեծ ազդեցություն՝ սուննի շրջանակներում: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի նախաձեռնությամբ Մեքքայում փետրվարին անցկացված բանակցությունների արդյունքում պաղեստինյան չափավոր «Ֆաթհը» և իսլամական «Համասը» պայմանավորվեցին ստեղծել ազգային միասնության կառավարություն[1]:

3. Աշխարհաքաղաքական տարբեր հետաքրքրություններ, էթնոդավանական խառը պատկեր, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական տարբեր կողմնորոշումներ ունեցող արաբական աշխարհի համար արդի փուլում միասնական արաբական դիրքորոշում ունենալը կլինի կարևոր ձեռքբերում:
4. Ռիադի գագաթաժողովի մասնակիցներին ուղերձ էր հղել ՌԴ նախագահ Վ.Պուտինը, որտեղ նշված էր, որ Մերձավոր Արևելքում ստեղծված անկայուն իրավիճակը պայմանավորված է միաբևեռ ուժային կառավարման անարդյունավետությամբ: Վերջին շրջանում մերձավորարևելյան խնդիրների առնչությամբ Մոսկվայի ձեռնարկած միջոցառումներն ու միջնորդական առաքելությունները որևէ լուրջ հաջողություն չեն արձանագրել: Միջին Արևելքում ստեղծված իրավիճակը Ռուսաստանը դիտարկում է որպես միջազգային ասպարեզում սեփական նշանակությունը կարևորելու հարմար առիթ:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

[1] 2007թ. փետրվարի 8-ին Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ Մեքքայում ընթացող բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց «Ֆաթհ» և «Համաս» կազմակերպությունների միջև, որ ստացավ «Մեքքայի համաձայնագիր» անվանումը: Այն միտված էր միջպաղեստինյան բախումների դադարեցմանը, ազգային միասնության կառավարության կազմավորմանը, «Ֆաթհի» և «Համասի» միջև քաղաքական համագործակցության ամրապնդմանը, «Ֆաթհի» վերակազմավորմանը: Պաղեստինցիները հույս ունեն, որ նոր կառավարության կազմավորումը կնպաստի Իսրայելի հետ երկխոսության վերսկսմանը և հնարավորություն կտա դուրս գալ միջազգային մեկուսացումից:

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՖՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵԹՈԴ ԵՎ ԱՂԲՅՈՒՐ

Ժամանակակից տեղեկատվական և կապի միջոցների զարգացումը միջանձնային շփման նոր ձևաչափեր և ուշագրավ հնարավորություններ է ստեղծել: Շնորհիվ այդ զարգացումների ձևավորվել են տեղեկատվության փոխանակման և տարածման վիրտուալ դաշտեր, որոնցում բավական մեծ ակտիվություն են ցուցաբերում հատկապես երիտասարդները: Նման վիրտուալ շփման ձևաչափերից են նաև ինտերնետային ֆորումները:

Միջանձնային վիրտուալ շփումը զգալիորեն ակտիվ է հատկապես գիտական, քաղաքական և այլ շրջանակներում ներգրավված «յուզերների» (օգտվողների) շրջանում: Նրանց ջանքերով ու անմիջական մասնակցությամբ ստեղծվում են ինտերնետային ֆորումներ, որոնցում հետզհետե ներգրավվում են ավելի ու ավելի մեծ թվով անհատներ:

Անընդհատ մեծանում է մասնագիտական կողմնորոշվածության կամ ընդհանուր հետաքրքրությունների հիման վրա ձևավորված հանրույթների քանակը, որոնց միավորում են այդ ֆորումներն ու կայքերը: Դրանք հետաքրքիր հնարավորություններ են ընձեռում օգտվողներին իրենց հետաքրքրությունների շրջանակներում որոշակի գործունեություն ծավալելու, տեղեկատվություն փոխանակելու, արտահայտվելու, կապեր հաստատելու, արդիական թեմաների շուրջ բանավիճելու և այլնի համար:

Ինտերնետային ֆորումները բավական գրավիչ երևույթ են մի քանի պատճառներով: Դրանք ոչ միայն հրատապ և հուզող հարցերի շուրջ օպերատիվ տեղեկատվություն ստանալու և նշված խնդրի վերաբերյալ հանրության մեջ շրջանառվող տեսակետներին ծանոթանալու հնարավորություն են ընձեռում, այլև հարմար և արդյունավետ միջոց են ցանկացած խնդրի շուրջ սեփական դիրքորոշումն ու տեսակետն արտահայտելու և տարածելու, «ֆորումային» հանրույթի քննարկման առարկա դարձնելու համար: Կարելի է այս ճանապարհով հրահրել մտքերի բախում և բացահայտել տվյալ հարցի հարաբերականորեն ամբողջականացված պատկերը: Հարկ է նշել, որ նման ֆորումներում ներգրավված անձինք առավելապես տեղեկացված անհատներ են, որոնք հետևում են հասարակական-քաղաքական գործընթացներին, հաճախ նաև հանդես են գալիս որպես ձևակերպված խնդիրների կրողներ և ունեն ձևավորված դիրքորոշում քննարկվող խնդիրների վերաբերյալ: Այսպիսով, ֆորումները գրավիչ են նախևառաջ այն պատճառով, որ օգտվողներին հնարավորություն են տալիս օպերատիվ հավաքագրել հրատապ խնդրի շուրջ շրջանառվող գրեթե բոլոր հնարավոր կարծիքները:

Ֆորումների գրավչությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն է ընձեռում օգտվողներին, քանի որ վերջիններս կարող են հանդես գալ նաև ծածկանունով, ինչն էլ նպաստում է առավել անկեղծ և անմիջական շփմանը:

Հետևաբար, քաղաքական որոշումներ կայացնողների համար ինտերնետային ֆորումները կարող են ծառայել որպես հասարակական ակտիվության և հանրության հետաքրքրությունների մասին իրազեկման արժեքավոր աղբյուր:

Մեզանում հատկապես հետաքրքիր տարածում են գտել հայ-ադրբեջանական, հայ-վրացական, վրաց-աբխազական, վրաց-օսական ինտերնետային ֆորումները, այսինքն՝ միջէթնիկ որոշակի լարվածության կամ ակտիվ հակամարտության փուլում գտնվող էթնիկ հանրույթների միջև գործող ֆորումները:

Ինտերնետային ֆորումների տարածման հետ մեկտեղ աստիճանաբար ձևավորվում է յուրօրինակ «ֆորումային հանրույթ», որին մեծ ներգրավվածություն ունեն թե՛ ակտիվ երիտասարդները, թե՛ այս կամ այն խնդրով պրոֆեսիոնալ մակարդակով զբաղվող անհատները: Մշակութաբանական տերմիններով՝ մեզանում ձևավորվում է «ֆորումային մշակույթ»:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է հասարակական հարաբերություններում նոր ձևաչափերի առաջացմանը: Ի դեմս ինտերնետային ֆորումների մենք նույնպես գործ ունենք հասարակական նոր երևույթի հետ:

Զգալիորեն մեծացել է ֆորումների դերը հակամարտող կողմերի միջև ընթացող քարոզչական պատերազմներում: Դրանք դարձել են միջավայր, որտեղ տեղի է ունենում նաև հասարակական կարծիքի ձևավորման գործընթաց: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ մոտ ապագայում դրանց դերակատարությունը վիրտուալ աշխարհից տեղափոխվի նաև իրական քաղաքականություն:

Պարունակելով բավական հարուստ և ուշագրավ տեղեկատվություն՝ ֆորումները տեսանելի ապագայում կարող են ծառայել նաև որպես տարբեր հետազոտությունների արժեքավոր աղբյուր ինչպես մշակութաբանական, ազգաբանական, սոցիոլոգիական, այնպես էլ քաղաքագիտական և այլ ոլորտներում: Օրինակ, թեմատիկ ֆորումները հասարակագետների համար, թերևս, արդեն անփոխարինելի աղբյուր են հասարակական զարկերակը շոշափելու համար: Դրանք հասարակական ակտիվության ինդիկատոր են, որոնց միջոցով կարելի է բացահայտել տարաբնույթ սկզբունքներով ձևավորված կոլեկտիվ հանրույթների գոյությունը, որոնք տարբերակվում են հավաքական ինքնության որոշ տարրերով: Դրանք կարող են լինել էթնիկ, սուբէթնիկ, մասնագիտական, ըստ զբաղվածության ոլորտի կամ քաղաքական կողմնորոշումների և այլն: **Փաստորեն, ինտերնետային ֆորումները հանրությանը հուզող հիմնախնդիրների մոտավոր ցանկի բացահայտման յուրօրինակ տեղեկատվության աղբյուր են:**

Այսպես, մեր հրապարակումներում մենք շարունակաբար քննարկում ենք թիֆլիսահայ համայնքի ներկայիս կացությունը, առկա վտանգներն ու մարտահրավերները համայնքի գոյության և հայապահպանության տեսակետից: Մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներում գործող ինտերնետային ֆորումը, որը միավորում է մի շարք թիֆլիսահայ ակտիվ երիտասարդների, բավական ուշագրավ հետազոտական նյութ է:

Նշենք, որ թիֆլիսահայ իրականության մեջ գործում է միայն մեկ ինտերնետային կայք *(www.armenia.ge),* որն ունի նաև մշտական գործող ֆորում: Շփման առանձնահատկություններից մեկն այն է, որ ֆորումում ընդգրկված են հիմնականում երիտասարդներ: Այս փաստն էլ ավելի արժեքավոր է դարձնում ստացված նյութը, քանի որ երիտասարդները, որպես կանոն, առավել օպերատիվ են արձագանքում հասարակական-քաղաքական անցուդարձերին, հետևողական են, մտահոգված իրենց ապագայով, երբեմն առավել ծայրահեղ իրենց գնահատականներում, ինչը բոլոր կարծիքների բախման և համադրման եղանակով միայն դրականորեն է անդրադառնում առկա վտանգների բացահայտման վրա: Մասնակիցների թվում գերակշռում են հայերը, բայց կան նաև վրացիներ, ինչն, անկասկած, միայն հարստացնում է ֆորումի բովանդակությունը՝ շնորհիվ իշխող բազմակարծության: Այսպիսով, նշված ֆորումի միջոցով կարելի է որոշակիորեն բացահայտել թիֆլիսահայ իրականության մեջ իշխող հասարակական տրամադրությունները, գնահատականները և մոտեցումները:

Սույն հոդվածում մեր խնդիրը ոչ թե թիֆլիսահայությանը հուզող հարցերի շուրջ քննարկում ծավալելն է, այլ ինտերնետային ֆորումի հնարավորությունները բացահայտելը որևէ արդիական խնդիր հետազոտելու ընթացքում:

Այսպիսով, մենք կսահմանափակվենք միայն ֆորումի կառուցվածքի քննարկմամբ և կտեսնենք, թե ինչպես է այն պատկերում թիֆլիսահայ իրականությունն իր բոլոր առանձնահատկություններով, թիֆլիսահայի մտահոգությունները՝ բոլոր հոգեբանական վայրիվերումնե-

րով: Այս իմաստով բավական է միայն քննարկել ֆորումի կառուցվածքը, քանի որ այն պարզորոշ պատկերում է բոլոր այն խնդիրների համալիրը, որոնք հուզում են թիֆլիսահայերին:

Եթե դիտարկենք «թոփիկները» (թեմաները) և «սուբթոփիկները» (ենթաթեմաները), որոնք կազմում են ֆորումի կմախքը, ապա միանգամից աչքի է զարնում այն, որ Վրաստանում հայերն ունեն այս կամ այն ոլորտին առնչվող համակարգային պրոբլեմներ: Դրանց մասին են վկայում ուղղակի վերնագրերի ձևակերպումները:

Այսպես, ֆորումում կան այսպիսի վերնագրեր. «Հայերի հիմնախնդիրները Վրաստանում», «Հակահայկական հիստերիա», «Հակահայկական կոմենտարիաներ», «Վիրահայոց թեմի խնդիրները Վրաստանում» և այլն: Իսկ արդեն թոփիկների բովանդակությունն ամբողջությամբ նկարագրում է այդ դրսևորումները, տրվում են գնահատականներ, մասնակիցները փորձում են բացատրել ստեղծված իրավիճակը, գտնել լուծման օպտիմալ մեխանիզմներ և այլն: Նշված թոփիկներում (կամ սուբթոփիկներում) զետեղված նյութերն ու քննարկումները գրեթե ամբողջությամբ առնչվում են վրացական ազգայնականության հակահայկական դրսևորումներին՝ կլինեն դրանք մամուլում, կենցաղում, աշխատանքային միջավայրում, թե քաղաքական գործիչների հռետորականության մեջ:

Ինտերնետային այս ֆորումի քննարկումը հասարակագետի հայացքով արդեն իսկ հնարավորություն է տալիս եզրակացնել, որ թիֆլիսահայերին հուզող այսօրվա առաջնային մտահոգության առարկան հենց վրացական որոշ շրջանակների հակահայ տրամադրություններն են:

Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ցույց են տալիս աղյուսակներում բերված ցուցանիշները, հայ-թուրքական սահմանի վերաբացումն, անշուշտ, էապես կբարձրացնի Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունում Թուրքիայի տեսակարար կշիռը՝ պոտենցիալ մարտահրավեր նետելով այնպիսի երկրների, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնությունը, Բելգիան, Գերմանիան, Իսրայելը և այլն: Վիճակագրական տրամաբանությունը ցույց է տալիս, սակայն, որ հայ-թուրքական սահմանի հնարավոր վերաբացման դեպքում Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության տեսակարար կշռում իրական մրցակցությունը կարող է ընթանալ հիմնականում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև: Մյուս կողմից՝ վերլուծությունում ներկայացվել են նաև տնտեսական տվյալներ՝ ելնելով այն հանգամանքից, որ հարևան Վրաստանի առևտրաշրջանառությունում վերջին երկու տարածաշրջանային տերությունների տնտեսական մրցակցությունն առավել ակնհայտ դրսևորումներ ունի: Վրաստանի տնտեսական ցուցանիշների վերլուծությունից ու Հայաստանի հետ համադրումից կարելի է որոշակի հետևությունների հանգել:

Աղյուսակ 1

1996-2005թթ. Հայաստանի ու Վրաստանի ապրանքաշրջանառությունը Թուրքիայի հետ, $ մլն

Հայաստան						
Արտահանումը Հայաստանից	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**	**2005**
Ընդհանուր, $ հազ.	300 487.4	341 836.1	505 159.7	685 599.2	722 911.5	973 920.5
Թուրքիայի մասնաբաժինը, ընդհ./%	1528/ 0.5%	1130/ 0.3%	1436/ 0.28%	1154/ 0.16%	2021/ 0.27%	2473/ 0.25%
Ներմուծումը Հայաստան	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**	**2005**
Ընդհանուր, $ հազ.	884 733.2	877 434.1	987 155.5	1 277 485.2	1 350 697.6	1 801 735.9
Թուրքիայի մասնաբաժինը, ընդհ./%	40 462/ 4.6%	33 755/ 3.8	38 232/ 3.9%	40 886/ 3.2%	44 806/ 3.3%	66 928/ 3.7%
Վրաստան						
Արտահանումը Վրաստանից	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**	**2005**
Ընդհանուր, $ հազ.	322 821.1	317 636.1	345 933.5	461 405.6	646 950.7	866 241.1
Թուրքիայի մասնաբաժինը, ընդհ./ %	72 836.5/ 22.5%	69 856.6/ 21.9%	53 739.3/ 15.5%	82 549.4/ 17.8%	118 607.1/ 18.3%	121 809.2/ 14%
Ներմուծումը Վրաստան	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**	**2005**
Ընդհանուր, $ հազ.	709 402.2	753 227.8	795 635.4	1 141 164.7	1 847 862.2	2 490 913.4
Թուրքիայի մասնաբաժինը, ընդհ./ %	111 458.7/ 15.7%	107 075/ 14.2%	89 554.3/ 11.2%	112 021.9/ 9.8%	202 088.8/ 10.9%	283 006.5/ 11.3%

Աղյուսակ 2

Հայաստանի առևտրաշրջանառությունում առաջատար հնգյակի տեսակարար կշիռը 2005թ.

Արտահանումը Հայաստանից	**%/դիրք**
Գերմանիա	15.6/1
Նիդեռլանդներ	13.7/2
Բելգիա	12.8/3
Ռուսաստան	12.2/4
Իսրայել	11.5/5
Ներմուծումը Հայաստանից	**%/դիրք**
Ռուսաստան	13.5/1
Բելգիա	8/2
Գերմանիա	7.8/3
Ուկրաինա	7/4
Թուրքմենստան	6.3/5

Աղյուսակ 3

2000-2005թթ. Թուրքիայի տեսակարար կշիռը Հայաստանի ապրանքաշրջանառությունում

Առևտրաշրջանառություն	2000 %/դիրք	2001 %/դիրք	2002 %/դիրք	2003 %/դիրք	2004 %/դիրք	2005 %/դիրք
Արտահանումը Հայաստանից	0.5/16	0.3/22	0.3/21	0.2/26	0.3/22	0.3/21
Ներմուծումը Հայաստան	4.6/8	3.8/8	3.9/10	3.2/11	3.3/12	3.7/10

Աղյուսակ 4

2004թ. Վրաստանի առևտրաշրջանառության տեսակարար կշռում առաջատար հնգյակը, %

Արտահանումը Վրաստանից	
Թուրքիա	18.3
Թուրքմենստան	17.7
Ռուսաստան	16.1
Հայաստան	8.4
Մեծ Բրիտանիա	4.9
Ներմուծումը Վրաստան	
Ռուսաստան	14
Թուրքիա	10.9
Մեծ Բրիտանիա	9.3
Ադրբեջան	8.5
Գերմանիա	8.2

Աղյուսակ 5

Թուրքիայի հետ Հայաստանի ապրանքաշրջանառությունը՝
ըստ հիմնական ապրանքախմբերի 2000-2005թթ. $ հազ.

Արտահանումը Թուրքիա	2000	2001	2002	2003	2004	2005
Կաշի և կաշվե հումք	1354	976.7	419.6	611	1002.6	1501
Իրեր սև մետաղներից					232.9	101
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ	82.6		56.2	22.1	188.1	142.5
Բնական/արհեստ. մարգարիտ, թանկարժեք/կիսաթանկ. մետաղներ	84.8	25.1		50	162.6	273.4
Սև մետաղներ					159.9	295.2
Պղինձ և պղնձե իրեր					115.3	74.3
Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր		26.8	910.6	376.3	106	65
Ալյումին և ալյումինե իրեր		85.8	23	37.1		
Փայտ և փայտե իրեր, փայտածուխ			23.5	23.6	29.5	
Ներմուծումը Թուրքիայից	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**	**2005**
Թուղթ և ստվարաթուղթ, իրեր թղթից	4745	2453	2934	2783	3415	4954
Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք	3093	1613.6				
Պլաստմասսա և պլաստմասսայե իրեր	2864	2213	1797	2758	3456	6355
Սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր	2593	2034	2491			
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ	2581	1854	2361	3250	4391	4747
Վառելանյութ, նավթ/նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	2040					
Կակաո և դրանից պատրաստված մթերք	1473					
Սև մետաղներ	1285	2536	3350	4350	2996	4850
Կերամիկական իրեր	1257	1381.3	1995	2370		
Շաքար և հրուշակեղեն շաքարից			1785			
Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր			1676			
Ալյումին և ալյումինե իրեր				1524	2151	2983
Էլեկտր. սարքավորումներ, ձայնագրող ապարատներ				1502	1904	2424
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատ.					1904	3209

Արտահանումը Թուրքիա	2000	2001	2002	2003	2004	2005
Կենդ./բուսական ծագման յուղեր, ճարպեր, մեղրամոմ					2218	2807
Օճառ, մակերես. ակտիվ օրգանական միջոց., մաքրող միջոց., քսուք./մոմեր					1730	3257
Փայտ և փայտե իրեր						2416
Տրիկոտաժե հագուստ						2176
Իրեր սև մետաղներից						2725

Աղյուսակ 6

ՀՀ ապրանքաշրջանառությունը Ռուսաստանի հետ 2005թ.

Արտահանումը Հայաստանից, $մլն	
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	71.3
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր/մետաղներ	10.2
Էլեկտրական մեքենաներ/սարքավորում., ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	5.9
Կաուչուկ և ռետինե իրեր	5.3
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորում. և մեխանիկական մասեր	2.8
Կաթ/կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդան. ծագման սննդամթերք	2.7
Ներմուծումը Հայաստան, $մլն	
Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր	49.9
Հացահատիկներ	45
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր/մետաղներ	24
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորում. և մեխանիկական մասեր	20.8
Կաուչուկ և ռետինե իրեր	9.3
Վառելանյութեր, նավթ/նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	8.4
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	8.3
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	7.4
Կակաո և դրանից պատրաստված մթերք	6.8

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ

Թուրքական կառավարության կողմից Վանա լճի Աղթամար կղզու Սբ. Խաչ եկեղեցու վերականգնումը և այդ խնդրի քաղաքական ու տեղեկատվական հնչեղությունը չեն կարող շփոթության մեջ գցել որևէ մեկի։ Հատկանշական է, որ Սբ. Էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսության դիրքորոշումը հստակ էր՝ չմասնակցել անխաչ Սբ. Խաչ եկեղեցու բացման արարողությանը։ Միևնույն ժամանակ, մեզ համար շահեկան է թեկուզ այն հանգամանքը, որ եկեղեցին այժմ թանգարան է։ Գուցե կգա մի օր, երբ եկեղեցին ծառայի իր կոչմանը։

Թուրքիան Սբ. Խաչի վերականգնման համար ծախսել է շուրջ $2 մլն, ինչը մի կաթիլ է այն վիթխարի փոխհատուցումից, որ այդ երկիրը պետք է վերադարձնի հայերին։

Հայոց ցեղասպանագիտությունը, ամենայն բարեխղճությամբ ուսումնասիրելով հայերի զանգվածային բնաջնջման հիմնական շարժառիթները, շատ դեպքերում անուշադրության է մատնել տնտեսական դրդապատճառը։ Բացառությամբ առանձին հեղինակների (Լ.Վարդան, Հ.Ղազարյան), տնտեսական գործոնը հետազոտողների մտածիրից դուրս է մնացել։ Մինչդեռ հայոց ունեցվածքը բռնազավթման մշտական թիրախ էր թե՛ օսմանյան թուրքերի, թե՛ դեռևս ազգային ինքնություն չունեցող ադրբեջանցիների համար։

Այս տեսանկյունից ուշագրավ է պատմաբան Ե.Խաթանասյանի դիտարկումը. *«Ի՞նչ է գումարը Թուրքիայի հայության այն հարստության՝ անձնական, ազգային ու հավաքական (միությունների, ընկերությունների և կազմակերպությունների), որ Մեծ Եղեռնի ժամանակ թուրք կառավարությունը գրավեց, կողոպտեց ու փչացրեց։ 1919-ին Հայ Ազգային պատվիրակությունը պաշտոն հանձնեց օտար և հայ մասնագետներից բաղկացած մի հանձնախմբի՝ թրքահայության մինչև Մեծ Եղեռնը ունեցած հարստությունը գնահատելու գործը։ Մանրակրկիտ և բարեխիղճ ուսումնասիրությունից հետո հանձնախումբը վերջնապես և միաձայնաբար հանգեց այն եզրակացության, որ հայությունից Թուրքիայի հափշտակած հարստության արժեքը հասնում է 3 մլրդ 350 մլն դոլարի»*[1]։

50 տարի անց հեղինակն այս գումարին ավելացրել էր տարեկան 5%[2] և ստացել $37 մլրդ 145 մլն 641.595 գումար։ (Թվաբանական պարզ գործողությամբ կարելի է ստանալ նոր ցուցանիշ՝ 1965-2007թթ. կտրվածքով)։

1918թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքը՝ Ադրբեջանի Հանրապետության կառավարության հետ մեկտեղ, գրավեց Բաքուն, և ճիշտ երկու ամիս ադրբեջանցիները թուրք զինվորների օգնությամբ իրականացնում էին հայկական ջարդեր[3]։ Քաղաքում մնացած 57.380 հայից, ոչ լրիվ հաշվարկներով, երկու ամսում ոչնչացվեց 29.063-ը։

Մուդրոսի զինադադարից հետո թուրքական զորքը հետ քաշվեց, և նոյեմբերի 17-ին Բաքու մտավ դաշնակից երկրների զինուժը՝ բրիտանացի գեներալ Թոմսոնի գլխավորությամբ։ Արդեն նոյեմբերի 21-ին Ելիզավետպոլում գտնվող թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Նուրի փաշային Թոմսոնն ուղարկեց հետևյալ հեռագիրը. *«Բաքու ժամանելուն պես զեկույցներ են ստացվել օսմանյան զինվորների կողմից թալանի և ունեցվածքին հասցված վնասների մասին։ Բաքվում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ներկայացուցիչներից կազմվել է հանձնաժողով՝ ապացուցված վնասների ընդհանուր արժեքի գնահատումը հետաքննելու համար։ Քանի որ* ապագա գումարը պետք է փակվի Թուրքիայի հաշվին (ընդգծ.՝ *Խ.Դ.), Ձեզ գրում եմ, որպեսզի հնարավորություն ունենաք վերադարձնելու ունեցվածքը։ Հայտնում եմ Ձեզ, որ անհրաժեշտություն ծագելու դեպքում կձնավորվեն այլ*

[1] *Խաթանասեան Ե.,* Հայոց թիւը, Բոստոն, 1965թ., էջ 22։

[2] Համաշխարհային բանկային պրակտիկայում ընդունված կարգի համաձայն, եթե կողմերի միջև չկային պայմանագրային հարաբերություններ, ապա դրույք էր համարվում 5%-ը։

[3] Տե՛ս *Իշխանեան Բ.,* Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920թ.։

հանձնաժողովներ՝ բողոքները քննարկելու համար: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է Ձեզ և Ձեր գեներալներին տեղեկացնել սույն մտադրության մասին»[1]:

Դեկտեմբերին ստեղծվեց «Դաշնակից տերությունների վերստուգիչ հանձնաժողով» անվամբ պաշտոնական, միջազգային մի մարմին, որի 30 անդամներից 7-ը հայեր էին: Հանձնաժողովը Բաքվի *ողջ* բնակչությանն առաջարկեց ներկայացնել ցուցակ-նախահաշիվներ՝ փոխհատուցման չափը պարզելու նպատակով, ապա ստուգեց դրանց իսկությունը, իսկ 1919թ. ապրիլին վերջացրեց ու հրապարակեց ամփոփիչ տվյալները: Օրինական վճարման ենթակա ճանաչվեց. հայերին՝ 453 մլն 184.126 ռուբլի, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին՝ 48 մլն 824.531ռ., վրացիներին՝ 3 մլն 995.049ռ., մուսուլմաններին (պարսիկներ, լեզգիներ, ադրբեջանցիներ)՝ 2 մլն 226.822ռ., հավաքական սեփականատերերին (ֆիրմաներ, գործարաններ, ձեռնարկություններ, միություններ)՝ 83 մլն 871.114ռ.: Ընդ որում, յուրաքանչյուր վնասակրի տրամադրվեց համապատասխան պաշտոնական չեկ՝ փոխհատուցման գումարի նշումով:

Որպեսզի պարզ լինի վերոհիշյալ գումարների ներկա արժեքը, կատարել ենք հետևյալ հաշվարկը: 1919թ. ֆունտ ստերլինգի և ռուբլու փոխարժեքն ուներ 1:10 հարաբերակցություն, հետևաբար այդ գումարները պակասեցրել ենք 10 անգամ, ապա 1919-2006թթ. ժամանակային ընդգրկմամբ դրանց ավելացրել տարեկան 5% դրույքաչափը և ստացել այսպիսի պատկեր. Թուրքիայի կողմից փոխհատուցման ենթակա գումարը ներկայումս կազմում է 4 մլրդ 552 մլն 032.960 ֆունտ ստերլինգ, որից *հայերի մասնաբաժինն է 3 մլրդ 518 մլն 847.403 ֆունտ ստերլինգ*:

Սակայն 1918թ. բաքվահայոց ցեղասպանության նյութական փոխհատուցման հարցում իրավական տեսակետից լիովին պատասխանատվություն է կրում նաև ներկայիս Ադրբեջանը: 1991թ. հոկտեմբերի 18-ին այդ երկրում ընդունվել է «Ադրբեջանական Հանրապետության սահմանադրական ակտը Ադրբեջանական Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին, որի 2-րդ հոդվածում ասված է. *«Ադրբեջանական Հանրապետությունը 1918 թվականի մայիսի 28-ից մինչև 1920 թվականի ապրիլի 28-ը գոյատևած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդն է»:*

1918թ. Բաքվի հայության ջարդերն իրականացվեցին ոչ միայն ադրբեջանական կառավարության դրդմամբ ու խրախուսմամբ, այլև *ուղղակի մասնակցությամբ:* Եթե ներկայիս Ադրբեջանն իր նախորդի ժառանգորդը, իրավահաջորդն է, ապա պարտավոր է ստանձնել նաև փոխհատուցումը: Իսկ դա՝ նույնակերպ հաշվարկով, 1918-1920թթ. և 1991-2006թթ. ժամանակային ընդգրկմամբ, ունի հետևյալ տեսքը. Բաքվում սպանված կամ չսպանված, բայց թալանված բնակիչների ժառանգորդներին Ադրբեջանը ներկայումս պարտք է 134 մլն 149.279 ֆունտ ստերլինգ: Որից *հայերին՝ 102 մլն 674.461 ֆունտ ստերլինգ,* ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին (գերմանացիներ, ավստրիացիներ, հրեաներ, լեհեր, չեխեր, ֆրանսիացիներ, լատվիացիներ և այլք)՝ 11 մլն 062.275, վրացիներին՝ 905.159, մուսուլմաններին՝ 504.529, հավաքական սեփականատերերին՝ 19 մլն 002.855 ֆունտ ստերլինգ:

Պետք է հաշվի առնել, որ թե՛ Ե.Խաթանասյանի և թե՛ մեր հաշվարկներն ունեն թերի կողմ. մենք միայն կատարել ենք թվաբանական պարզ հաշվարկ՝ առանց հաշվի առնելու այնպիսի գործոններ, ինչպիսիք են փողի արժեզրկումը, գնողունակությունը և այլն. այդ դեպքում տոկոսադրույքներն ու ընդհանուր պատկերն այլ կլինեին: Դա անելու, ճշգրիտ գումար ամրագրելու համար անհրաժեշտ է տնտեսագետների, ֆինանսիստների համադրված աշխատանք: Համոզված ենք, որ փոխհատուցման գործընթացը[2] պետք է իրականացվի միջազգային համապատասխան իրավական ատյաններում:

Խաչատուր Դաղայան
«Նորավանք» հիմնադրամ

[1] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 39, թ. 50:

[2] Փոխհատուցման հետ կապված շրջանցված են 1989-ից Ադրբեջանի հայության ջարդերը, բռնի տեղահանումները և նրա ունեցվածքին տիրանալու հետ կապված խնդիրները: